

**ԱՇՄԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ՝  
ՈՐՊԵՍ ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ  
ՈՒՂԻ**

**Խաչատրյան Նարինե**

*Վանաձորի թիվ 6 հիմնական դպրոց, Հայաստան*

**Համառոտ ներածական:** Ածականի՝ որպես առարկայի հատկանիշ ցույց տվող բառի ուսուցումն սկսվում է դեռևս նախաայբբենական շրջանում գործնական վարժությունների միջոցով, որոնց շնորհիվ հարստանում է աշակերտի բառապաշարը հատկանիշ արտահայտող բառերով: Աշակերտների բառապաշարի մասին նախնական պատկերացում կազմելու համար առաջադրվում են *ինչպիսի՞* հարցին պատասխանող արտահայտություններ, որոնց արդյունքում աշակերտները համոզվում են, որ «միննույն հատկանիշ ցույց տվող բառը կարող է գործածվել տարբեր առարկա ցույց տվող բառերի հետ» [2]:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Առարկայի հատկանիշ արտահայտող բառերի բազմազանությունն ունի աշակերտի խոսքի՝ բառապաշարի հարստացման ու զարգացման նպատակ, քանի որ այն խթանում է անհատի պատկերավոր մտածողությունը: Ժամանակակից մանկավարժները դրա համար կարևորում են ուսուցման ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակների համատեղումը: Վերջինս ձևավորվում է գոյական-ածական բառակապակցությունների միջոցով կապակցված խոսք կազմելու կարողություն, ունակություն ու հմտություն, ապահովում է անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն արտահայտելու կարողություն, հետևաբար նաև՝ միջանձնային հարաբերություններ ստեղծելու հնարավորություններ [3, էջ 17]:

Մասնագիտական գրականության մեջ հայ մանկավարժ-հեղինակները ածականի ուսուցման համար կարևորել են խոսքային կիրառությունը՝ այսպիսով «ածական» թեման զուգահեռելով որոշիչ թեմային. «...Ածական թեման ուսումնասիրելիս ուսուցիչը պիտի զուգահեռ անցկացնի այդ խոսքի մասի իմաստի և որոշիչի միջև» [5, էջ 103]: Վերջինիս ուսուցման կարևոր առանձնահատկությունն այս դեպքում համարվում է հարցադրումը, որի միջոցով առանձնացվում են խոսքում գործածված, հատկանիշ ցույց տվող բառերը, և դրանք կիրառվում են խոսքային այլ միջավայրերում:

Տարրական դասարաններում ածականի ուսուցման ամփոփման համար առաջադրվում է համագործակցային դաս կազմակերպել՝ «Բերքահավաք» վերնագրով: Աշակերտները բաժանվում են չորս խմբի՝ «գոյական», «ածական», «թվական», «բայ» անվանումներով, որի ավարտին կատարում են փոխակերպման վարժություն՝ գոյականները դարձնում են ածականներ, ածականները՝ բայեր և այսպես շարունակ ըմբռնելով խոսքի մասերի միջև եղած տարբերություններն ու կիրառական կառուցվածքային տարբերությունները [4, էջ 306]:

Ածականի ուսուցման շրջանակներում մասնագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև հատկանիշ ցույց տվող բառերի համադրական ուսուցման եղանակ: Այս դեպքում համեմատության մեջ են դրվում ածականները և մակբայները՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով այն բառերի վրա, որոնք ունեն երկբնույթ կիրառություն. մի դեպքում լրացնում են բայերին, մյուս դեպքում՝ գոյականներին: Նման բառերի ուսուցումը նպաստում է խոսքի զարգացմանը, և աշակերտները հասկանում են, որ նույն բառով կարելի է բնութագրել ոչ միայն տարբեր առարկաներ, այլ նաև տարբեր գործողություններ [1, էջ 238]: Այս դեպքում պետք է հատկապես ուշադրություն դարձնել ածականների կիրառական սահմանափակումներին, քանի որ տարբեր բառերին կապակցվելու հնարավորությամբ հանդերձ՝

ածականներն ունեն նաև կիրառական սահմափակումներ, որոնց անտեղի կիրառությունը կարող է սխալ ու զավեշտալի լինել:

**Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Մեր ուսումնասիրության նպատակն է աշակերտի վերլուծական մտածողությունը զարգացնող իրողությունների բացահայտումը կատարել բառապաշարի հարստացման եղանակով: Այս նպատակին հասնելու համար կարևոր է ածական անվան կիրառական առանձնահատկությունների բացահայտումը, քանի որ այն ունի ուղղակի և փոխաբերական իմաստներով գործածության լայն հնարավորություններ:

**Հետազոտության նորույթը:** Հոդվածում նորովի է ներկայացվել և մեկնաբանվել ածականի կիրառական առանձնահատկությունների ուսուցման գործընթացը, որը նպաստում է ածականի պատկերավոր մտածողության զարգացմանը:

**Բանալի բառեր`** առարկայի հատկանիշ, նախաայբբենական շրջան, բառապաշար, համեմատական ուսուցում, կապակցված խոսք:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ածականի՝ որպես առարկայի հատկանիշի ուսուցումն սկսվում է գունանուններից, որոնց ճանաչումով ուսուցման հենց առաջին աստիճանում հանձնարարվում է ներկել համապատասխան նկարները, այսպես՝ «Բժիշկը հագել է կապույտ խալաթ»: «Ձինվորականի համազգեստը կանաչ գույնի է»: «Ձմեռ պապի խալաթը կարմիր գույնի է»: «Կարմիր գույնի է նաև բժշկի գլխարկի խաչը»: «Պարուհու զգեստը սև գույնի է»: Այնուհետև համապատասխան գույներով են բնորոշվում *բանան, խաղող, խնձոր, ելակ, տանձ, լիմոն* մրգանունները [7, էջ 4]: Պարզ գունանուններին փոխարինելու են գալիս կազմությամբ բարդ գունանունները, և *մոխրագույն, շագանակագույն, նարնջագույն* և այլ բառերով բնութագրվում են անտառի կենդանիները՝ *փիղը, գետաձին, գայլը, աղվեսը, մուկն* ու *կատուն*: Այստեղ գունանուններին զուգահեռ ներկայացվում են *ընտանի* և *վայրի* հատկանիշները, որոնցով բնութագրվում են կենդանիշ գոյականները [7, էջ 5]:

Մանկավարժական գործունեության ընթացքում կիրառած արդիական մեթոդներով հատկանիշ արտահայտող բառերի ուսուցման ներկայացում: Նախաայբբենական շրջանում հականիշ գույզերով են ներկայացվում *կարճ* ու *երկար, հաստ* ու *բարակ* և այլ ածականներ, որոնցով բնութագրվում են մի դեպքում դպրոց տանող ճանապարհը, մյուս դեպքում՝ կարճ ճանապարհը խորհրդանշող գերանները [7, էջ 6]: *Կշեռք* հասկացության ուսուցման ժամանակ էլ սովորում են *ծանր* ու *թեթև* ածականների կիրառական առանձնահատկությունները [7, էջ 7]: *Հաստ* և *բարակ* հականիշների տարբերակումը ներկայացված է համապատասխան գրքերի նկարներով, որոնցից հաստ գիրքը արջի մոտ է, իսկ բարակը՝ աղվեսի: *Հաստ* ու *բարակ* հասկացությունների ուսուցումը առնչվում է նաև երկրաչափական մարմինների ուսուցմանը. այս հատկանիշներով են բնութագրվում քառակուսի և ուղղանկյուն պատկերները, ինչպես նաև սունկերը, որոնցից հաստերին բնորոշ է *ուտելի*, իսկ բարակներին՝ *թունավոր* հատկանիշը [7, էջ 8]:

Ածականների՝ հականիշներով համեմատական ուսուցումը շարունակվում է հետագա դասերի ընթացքում. ուսուցանվում են *աջ* և *ձախ* հատկանիշները՝ ըստ երթևեկության կանոնների, որոնց ընթացքում ուսուցանվում են նաև *արագ* և *դանդաղ* հատկանիշները, վերջիններս, ի տարբերություն վերևում ներկայացված բառերի, ավելի հաճախ են լրացնում գործողություն ցույց տվող բառերին [7, էջ 10-11]: Հենց այստեղ պետք է աշակերտների ուշադրությունը դարձնել հատկանիշ ցույց տվող երկու կարգի բառերի կիրառական առանձնահատկություններին, ըստ որոնց՝ դրանց մի մասը ցույց է տալիս առարկայի, իսկ մյուս մասը՝ գործողության հատկանիշ:

Ուսուցման հաջորդ աստիճանում վերլուծական եղանակով ներկայացվում են նախադասության, բառի, վանկի և հնչյունի մասին գիտելիքներ, որոնք նկար-բառ դիդակտիկ ուսուցման եղանակով առաջին հերթին առնչվում են գոյականների՝ առարկա ցույց տվող բառերին, երկրորդաբար՝ հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերին:

Տառուսուցումն սկսվում է **ա** տառի ընթերցանությամբ ու գրությամբ: Տառերի տեսակները նույնպես տարբերակվում են հականիշ գույզերով՝ մեծատառ և փոքրատառ, տպագիր և ձեռագիր: Հնչյունները տարբերակվում են ձայնավոր և բաղաձայն հատկանիշներով: Այսպիսով՝ լեզվական իրողությունները

նույնպես ուսուցանվում են հատկանիշ բառերի ներկայացմամբ, որոնց նշանակությունը իմանալը նպաստում է խոսքակազմության ճիշտ ուսուցմանը:

Այբբենարանում առարկա ցույց տվող բառերին զուգահեռ աշակերտները կարդում են նաև *անուշ* հատկանիշը՝ տառ + նկար ընթերցանության մեթոդով:

«Ածական+գոյական» կապակցություններով բառակապակցությունների ընթերցանությունը հնարավոր է դառնում՝ **ու** տառի ուսուցումից սկսած, որտեղ աշակերտները կարդում են *սուր, սիրուն* հատկանիշները, որոնցով բնութագրվում են *կարկին, մատիտ* առարկաներն ու *Արուսը* [7, էջ 62]:

**Պ** տառի ուսուցման ժամանակ կարդում են *սպիտակ* հատկանիշի անունը՝ բնութագրելով *ամպ, կարաս* առարկաները: **Ը** տառի ուսուցման ժամանակ կարդում են *ընտիր, ընտանի* հատկանիշները՝ բնութագրելով *սունկ* և *կատու* գոյականները [7, էջ 74]: Այսպիսով սկսում են կարդալ փոքրիկ բնագրեր, որոնցում, բացի առարկա և գործողություն նշանակող բառերից, ի հայտ են գալիս հատկանիշ ցույց տվող բառեր, որոնցով կազմվում են բազմակի բառակապակցություններ՝ *սպիտակ սունկ, կարմիր մատուր, ընտիր ընկույզ*: Ածականների գոյականական կիրառությամբ է գործածված *նման* ածականը: «*Նմանը նմանին կսիրի*» առածը աշակերտները կարդում ու մեկնաբանում են որպես «*մեկը մյուսին արժի*» նշանակող արտահայտություն:

Շարունակելով ածականների՝ հականիշներով ուսուցումը՝ աշակերտներին տեղեկություններ են հաղորդվում *լուսնի, լիալուսնի և կիսալուսնի* մասին, որտեղ *լի* և *կես* ածականները հանդես են գալիս որպես *լուսին* առարկայի տարբերակման հատկանիշներ: Հատկանիշ ցույց տվող բառի համանուն է նաև *Սպիտակ* քաղաքի անունը, որ աշակերտները կարդում են **յ** տառի ընթերցանության ժամանակ, ծանոթանում Հայաստանի մի շարք քաղաքների: Այստեղ աշակերտները կարդում են *կարմիր մայրամուտ, կապույտ սար, միայնակ ամպ* փոխաբերական իմաստով բառակապակցությունները, հասկանում բառի ուղիղ և փոխաբերական նշանակությունների կիրառական առանձնահատկությունները: Եթե ուղղակի իմաստով կիրառություններում բառերն ունեն կիրառական սահմանափակումներ, ապա փոխաբերական իմաստով կիրառություններում այս սահմանափակումները գրեթե վերանում են, և ցանկացած առարկա ցանկացած հատկանիշով կարող է բնութագրվել՝ նայած նրան, թե հեղինակը ինչ համեմատություն է կատարում և ինչ զգացողություն է ցանկանում հայտնել ընթերցողին:

Ածականի հականիշ գույգերով են կազմվում նաև առածներն ու ասացվածքները, որոնցից աշակերտները կարդում են «*Լավ է գիտունին գերի, քան անգետին՝ սիրելի*» ասացվածքը: Հականիշ գույգերը հիմնականում նույնարմատ են լինում և տարբերակվում են ածանցներով, որոնցից *վախկոտ* և *անվախ* գույգերը ներկայացված են **խ** տառի ուսուցման շրջանակում: Այսպես՝ աշակերտները **ջ** տառի ընթերցանության ժամանակ կարդում են *կանաչ* բառը, **ղ** տառի ժամանակ՝ *ղեղին* բառը:

Այբբենարանի ուսուցման ժամանակ հաճախ ենք անդրադառնում նաև հայկական ժողովրդական հեքիաթներին, որոնց վերնագրերում գոյականներին զուգահեռ կիրառվում են նաև հատկանիշ արտահայտող բառեր, ինչպես՝ «*Քաջ Նազար*», «*Պոչատ աղվես*», «*Կարմիր գլխարկ*» և այլն:

Ուսումնասիրելով «Այբբենարանում» կիրառված ածականները՝ վիճակագրական հաշվումներով պարզեցինք, որ դրանք մոտավորապես 54-ն են, որոնցից հարաբերական են ընդամենը հինգը: Որակական ածականները հիմնականում հանդես են գալիս դրական աստիճանով, միայն վերջին՝ «Հրաժեշտ Այբբենարանին» բանաստեղծության մեջ գործածվել են երկու գերադրական աստիճանով արտահայտված ածականներ: Որակական ածականներին բնորոշ են ինչպես կազմությամբ պարզ, այնպես էլ ածանցավոր ու բարդ լինելը: Ընդ որում՝ կազմությամբ բարդ ածականներով հիմնականում կազմվել են կրկնավոր բառեր:

Ըստ ժամանակակից դպրոցի կրթական ծրագրի՝ «Այբբեբարան» դասընթացից հետո սկսվում է հայոց լեզվի և գրականության տարրական ուսուցումը, որ կոչվում է «Մայրենի» [8]:

«Մայրենիի» առաջին դասարանի դասագիրքն սկսվում է *բարի* ածականով՝ *բարի գալուստ* արտահայտությամբ, որի շնորհիվ գիրքը պատկերվում է իբրև ընտանիք, տուն, որն ամեն անգամ բացելիս սովորում ես ինչ-որ բան: Առաջին թեման վերնագրված է «Հայերենի կախարդական աշխարհը», որտեղ բառերը կիրառված են փոխաբերական նշանակությամբ, և ներածական խոսքում հանձնարարվում է «*Սովորես ճիշտ խոսել, դառնաս հնարագետ ու սրամիտ*» խոսքը, որից պարզ է

դառնում, որ յուրաքանչյուր հնարագիտություն ու սրամտություն իր նյութական արտահայտությունն է գտնում ճիշտ խոսելու միջոցով [8, էջ 3]:

Վ. Գրիգորյանի «Իմ դասագիրքը» բանաստեղծությամբ է սկսվում գրականության ընթերցանությունը, որտեղ ուղղագրական և ուղղախոսական տարբերություն ունեցող բառերի շարքում ուսուցանվում է **սուրբ** ածականը [8, էջ 4], որից պարզ է դառնում, որ լեզվական իրողությունների ուսուցումը կապված է միմյանց հետ:

Ածականները պատասխանում են **ինչպիսի՞** հարցին, որը խոսքում կապակցվում է առարկա ցույց տվող բառերին՝ ցույց տալով դրանց որպիսությունը, հատկանիշը: Հ. Թումանյանի «Դպրոցի ճամփան» [8, էջ 5] բանաստեղծության մեջ ներկայացվում են *դժվար, երկար, կարճ, դուրայի* ածականները, որոնք ունեն մեկ ընդհանուր առարկա՝ որոշյալ՝ *դպրոցի ճամփա*, որից պարզ է դառնում, որ մեկ առարկան կարող ենք բնութագրել տարբեր հատկանիշներով, որոնք իրար կա՛մ հոմանիշ, կա՛մ հականիշ են:

Ածականի ուսուցման գործընթացում պետք է կարևորել այն հանգամանքը, որ երեխայի մտապատկերում գոյականի և բայերի թիվն ավելի արագ է աճում, քան ածականներինը: Մա բացատրվում է այն հանգամանքով, որ ծնողները երեխայի հետ շփվելիս ավելի քիչ ուշադրություն են դարձնում առարկայի հատկանիշների և որակի վրա: Ուստի փորձառու մանկավարժները խորհուրդ են տալիս «սովորեցնել խոսքի մեջ օգտագործել ածականներ, բայեր, որոշիչներ, երեխաների բառապաշարը լրացնել մարդկանց հուզական հաղորդակցմանը վերաբերող բառերով» [9, էջ 35]:

**Եզրակացություններ:** Տեսական գիտելիքները տարրական դասարաններում ուսուցանվում են գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցանությանը զուգահեռ: Այդ իսկ ձևաչափով հանձնարարվում է լեզվական նյութերը ուսուցանել լեզվատրամաբանական առաջադրանքներով, որոնք հիմնականում կատարվում են կրկնության եղանակով՝ առանց կիրառելու «հոլովում», «խոնարհում» եզրույթները. հարցադրման եղանակով ուսուցանվում են գոյականների, ածականների և բայերի ձևափոխական առանձնահատկությունները:

Աշակերտների խոսքի զարգացման տեսանկյունից կարևոր է ուշադրություն դարձնել նաև ածականների լրացումառության վրա: Հատկապես տարրական դասարաններում աշակերտները հաճախ են լսում «գոհ» և «դժգոհ» բառերի կիրառությունները, որոնք կապակցվում են բացառական հոլովի հետ: Այս դեպքում հանդես են գալիս ածականի խնդրառական առանձնահատկությունները, երբ ածականներն են լրացում պահանջում՝ արտահայտված այս կամ այն հոլովով, որոնց ճիշտ կիրառությունը խոսքային կիրառական նշանակություն ունի: Նման կարգի խոսքային կարողությունները զարգացնելու համար առաջադրվում է աշակերտներին ուղղել սխալները, որոնք կարող են ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքներով:

#### **Օգտագործված գրականության ցանկ**

1. **Ավետիսյան Գ.**, Մակբայական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկա, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գիտական տեղեկագիր, Երևան, 2020:
2. **Գալստյան Հ.**, Մայրենի դաս. ածականի ուսուցումը տարրական դասարաններում: <https://multiurok.ru/files/mayreni-das-atsakani-owsowts-owme-tarrakan-dasaran.html>, հասանելի է 04. 04. 21:
3. **Խաչատրյան Մ.**, Ածականի բառաբերականական կարգերի ուսուցումը միջին դպրոցում, Մեղմագիր, Երևան, 2014:
4. **Խաչատրյան Մ.**, Լեզվական գիտելիքների ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ ծրագրային պահանջի, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Գիտական տեղեկագիր, Երևան, 2014:
5. **Մուրացյան**, Անմեղ գրույցներ, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963:
6. **Մարգարյան Ա., Համբարձումյան Մ.**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012:
7. **Մարգարյան Վ.**, Այբբենարան, Երևան, 2020:
8. **Մարգարյան Վ.**, Մայրենի 1, Երևան, 2010:

9. **Մճրախյան Լ.**, Բառապաշարի զարգացման արանձնահատկությունները նախադարձական տարիքում// «Նախաշավիկ», 2017, 1, [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2017\(1\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Naxashavix/2017(1).pdf), հասանելի է 18.04.21:

## ИЗУЧЕНИЕ ПРИЛАГАТЕЛЬНОГО КАК СПОСОБ РАСКРЫТИЯ ЭСТЕТИЧЕСКОЙ ЦЕННОСТИ ХУДОЖЕСТВЕННОЙ КНИГИ В ПЕРВОМ КЛАССЕ

**Хачатрян Нарине**

*Ванадзорская основная школа №6, учительница начальной школы*

### Аннотация

Изучение прилагательного как признака предмета начинается с практических упражнений еще в доалфавитный период, обогащая словарный запас ученика атрибутивными словами, связанными с обучением синонимам и антонимам как концепции «*оружье*» и «*противник*».

Сравнительное обучение прилагательных с помощью антонимов продолжается с применением особенностей двух категорий атрибутивных слов. Некоторые из них обозначают признак предмета, а другие – признак действия, отвечая на вопросы «*какой?*» и «*как?*» соответственно.

Особенно важно аналитическое изучение атрибутивных слов (предложение – словосочетание – слово).

Основная цель обучения прилагательным – раскрыть эстетическую ценность прочитанной художественной книги. В результате, учащиеся обогащают свой словарный запас и развивают речь, что стимулирует визуальное мышление человека. Современные учителя используют сочетание индуктивного и дедуктивного методов обучения. Последний развивает способность и умение формировать связную речь с помощью фраз, состоящих из существительного и прилагательного, и обеспечивает способность свободно общаться и выражать свои эмоции, и, как следствие, дает возможность строить межличностные отношения.

В начальной школе теоретические знания преподаются ученикам параллельно с чтением художественных произведений. Исходя из этого, учителя используют лингвистические и логические задания для преподавания лингвистических материалов, в основном, методом «спирального» повторения.

**Ключевые слова:** признак предмета, доалфавитный период, словарный запас, сравнительное обучение связную речь.

### Список использованной литературы

1. **Аветисян Г.**, Методика изучения многозначных наречий, Ширакский государственный университет, Ученые записки, Ереван, 2020.
2. **Галстян А.**, Урок родного языка: обучение прилагательным в начальной школе
3. **Хачатрян С.**, Обучение лексико-грамматическим категориям прилагательного в средней школе.
4. **Хачатрян С.**, Обучение языковых знаний в начальных классах согласно программе, Ширакский государственный университет, Ученые записки, Ереван, 2014.
5. **Мурацян**, Невинные разговоры, Сборник стихов, т. 6, Ереван, 1963.
6. **Саргсян А.**, Амбарцумян С., Культура армянского языка и речи, учебное пособие, Ереван, 2012.
7. **Саргсян В.**, Букварь, Ереван, 2020.
8. **Саргсян В.**, Родной язык 1, Ереван, 2010.
9. **Смбатян Л.**, Особенности развития словарного запаса в дошкольном возрасте, Нахашавиг, 1. 2017.

## STUDYING AN ADJECTIVE AS A WAY TO REVEAL THE AESTHETIC VALUE OF A FICTIONAL BOOK IN THE FIRST GRADE

**Khachatryan Narine**

*Vanadzor No. 6 Basic School, Elementary School Teacher*

### Summary

Starting from the pre-alphabetic period in school, students start studying adjectives as words modifying nouns through practical exercises, which enriches students' vocabulary with attributive words that are used in the form of in form of synonyms and antonyms as “*friendly*” and “*opponent*” concepts.

The comparative teaching of adjectives with the help of antonyms is further uses the peculiarities of two categories of modifying words. A group of words modify an object, while another group modifies an action, answering the questions “*What kind of?*” and “*How*” respectively.

Analytical learning of attributive words (sentence-word combination-word) is especially important.

The main purpose of teaching adjectives is to reveal the aesthetic value of a fictional book read. As a result, students enrich their vocabulary and develop their speech, which stimulates an individual's visual thinking. Modern teachers use a combination of inductive and deductive teaching methods. The latter develops the ability and skill to form coherent speech through phrases made of a noun and an adjective, and ensure the ability to freely communicate and express one's emotions, and, as a result, gives an opportunity to build interpersonal relationships.

In elementary school, theoretical knowledge is taught to students in parallel with reading works of fiction. Based on this, teachers use linguistic-logical tasks to teach linguistic materials mainly by the method of ‘spiral’ repetition.

**Keywords:** words modifying nouns, pre-alphabetic period, attributive words, comparative teaching, coherent speech.

**References:**

1. **Avetisyan G.**, Adverbial polysemantic words and their teaching, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2020.
2. **Galstyan H.**, Native Language Class. Teaching Adjectives in Elementary School.
3. **Khachatryan S.**, Teaching lexical and semantic categories of the adjective in the secondary school
4. **Khachatryan S.**, The Teaching of Language Knowledge in Elementary Classes Based on the Program Requirement, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2014.
5. **Muratsan**, Innocent Conversations, Collection of Poems, Vol. 6, Yerevan, 1963.
6. **Sargsyan A.**, Hambardzumyan S., Culture of the Armenian Language and Speech, Educational Manual, Yerevan, 2012.
7. **Sargsyan V.**, Primer, Yerevan, 2020.
8. **Sargsyan V.**, Native Language 1, 2020.
9. **Smbatyan L.**, Peculiarities of Vocabulary Enrichment in Preschool Age, Nakhshavigh, 1. 2017.

*Материал был представлен и отправлен на рецензию: 08.10.2021*

*Принято к публикации: 27.10.2021*

*Рецензент: канд. биол. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 08.10.2021*

*Was accepted for publication: 27.10.2021*

*Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyana*